ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-176	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2001.05.31/15(147) Հոդ.377	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	18.04.2001
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	15.05.2001
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	31.05.2001	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի ապրիլի 18-ին

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հրդեհային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Գ Լ Ո Ւ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, քաղաքացիների հարաբերությունները հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում:

Հոդված 2. Օրենքի նպատակները

Սույն օրենքի նպատակներն են՝

ա) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական ուղղությունների սահմանումը.

բ) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում կարգավորման սկզբունքների և դրանց իրականացման մեխանիզմների սահմանումը.

գ) Հայաստանի Հանրապետության բնակչությանը որակյալ և հուսալի հրդեհային պահպանությամբ ապահովումը:

Հոդված 3. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

ա) հրդեհային անվտանգություն՝ հրդեհներից անձի, գույքի, հասարակության և պետության պաշտպանվածություն.

բ) հրդեհ՝ չվերահսկվող այրում, որը բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս է հասցնում անձին, հասարակության և պետության շահերին, վտանգում է մարդու առողջությունը և կյանքը.

գ) հրդեհային անվտանգության պահանջներ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ սոցիալական և տեխնիկական բնույթի հատուկ պայմաններ.

դ) հրդեհաշիջման (հրդեհի մարման) հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ՝ հրդեհի ժամանակ մարդկանց, գույքը փրկելու, տուժողներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու ուղղությամբ հրդեհային պահպանության մարտական գործողություններ.

ե) հրդեհային պահպանություն՝ հրդեհների կանխարգելման, հրդեհաշիջման, ինչպես նաև դրանց հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ անցկացնելու նպատակով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ուժերի և միջոցների, այդ թվում՝ հակահրդեհային միջոցների ամբողջություն.

զ) հրդեհային անվտանգության միջոցներ՝ հրդեհային անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարմանն ուղղված գործողություններ.

է) հրդեհատեխնիկական արտադրանք՝ հրդեհային անվտանգության ապահովման համար նախատեսված հատուկ տեխնիկական, գիտատեխնիկական և մտավոր արտադրանք, այդ թվում՝ հրդեհային տեխնիկա և սարքավորում, հրդեհային հանդերձանք, կրակմարիչ, հրապահպան և հրակայուն նյութեր, հատուկ կապի և կառավարման միջոցներ, համակարգչային ծրագրեր, տեղեկությունների բանկ, ինչպես նաև հրդեհների կանխարգելման և հրդեհաշիջման այլ միջոցներ.

ը) հրդեհային անվտանգության ապահովման համակարգ՝ հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերի և միջոցների, ինչպես նաև իրավական, կազմակերպական, տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական միջոցառումների ամբողջություն:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետությունում հրդեհային անվտանգության ապահովումը

Բնակչության, բնակավայրերի և օբյեկտների հրդեհային անվտանգությունն ապահովվում է՝

ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերով նախատեսված հրդեհային անվտանգության պահանջների պարտադիր կատարմամբ.

բ) հրդեհների առաջացումը կանխարգելող և դրանց մարմանը նպաստող համապետական և տեղական նպատակային ծրագրերի մշակմամբ ու իրագործմամբ:

Հոդված 5. Հրդեհային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Հրդեհային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Հոդված 6. Հրդեհային անվտանգության ապահովման մարմինների համակարգը

Հրդեհային անվտանգության ապահովման մարմինների համակարգն են կազմում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը, կազմակերպությունները, որոնք մասնակցում են հրդեհային անվտանգության ապահովմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(6-րդ հոդվածը լրաց. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 7. Պետական կառավարումը և վերահսկողությունը հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում

(վերնագիրը խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

1. Պետական հակահրդեհային ծառայությունն ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համակարգում:

2. Հրդեհային անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա համապատասխան տեսչական մարմինը:

(7-րդ հոդվածը խմբ. 03.07.02 ՀՕ-395-Ն, փոփ. 20.05.05 ՀՕ-108-Ն, խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 8. Հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերը

Հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերը (տեխնիկական կանոնակարգերը), ինչպես նաև հրդեհային անվտանգության պահանջները սահմանող ստանդարտները պարտադիր են բնակավայրերի, շենքերի և շինությունների նախագծման, կառուցման և շահագործման, հիմնանորոգման և վերակառուցման, ինչպես նաև սարքավորումների արտադրության և շահագործման ժամանակ:

Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը նախապես համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ:

Հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերով չսահմանված՝ հրդեհային անվտանգության ապահովման առանձին լուծումներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրակացություններ է տալիս հրդեհային անվտանգության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):

(8-րդ հոդվածը փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 9. Հրդեհների կանխարգելման հանրապետական և տեղական ծրագրերը

Հրդեհների առաջացումը կանխարգելող և դրանց մարմանը նպաստող հանրապետական և տեղական նպատակային ծրագրերը մշակում ու իրականացնում են պետական կառավարման մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ներկայացրած հակահրդեհային իրավիճակի վերլուծության արդյունքների և համապատասխան առաջարկությունների հիման վրա: Տեղական նպատակային ծրագրերը համաձայնեցվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Հոդված 10. Հրդեհների և դրանց հետևանքների պետական հաշվառումը

1l Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառումը կատարում է տեսչական մարմինը՝ այդ ոլորտում լիազորված մարմնի հետ համաձայնեցված: Հրդեհների և դրանց հետևանքների պետական միասնական հաշվառման կանոնները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(10-րդ հոդվածը խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 2.

ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 11. Հրդեհային պահպանության խնդիրները

Հրդեհային պահպանության հիմնական խնդիրներն են՝

ա) հրդեհների կանխարգելման կազմակերպումը.

բ) հրդեհաշիջումը:

Հրդեհային պահպանությունն այլ խնդիրներ կարող է իրականացնել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 12. Հրդեհային պահպանության համակարգը

Հրդեհային պահպանության համակարգում ներառվում են՝

ա) պետական հակահրդեհային ծառայությունը.

բ) գերատեսչական հրդեհային պահպանությունը.

բl1) տեսչական մարմին.

գ) հրդեհային պահպանության հասարակական կազմավորումները:

(12-րդ հոդվածը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 13. Պետական հակահրդեհային ծառայությունը և տեսչական մարմինը

(վերնագիրը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Պետական հակահրդեհային ծառայությունն իր ուժերով ու միջոցներով կազմակերպում և ապահովում է հրդեհաշիջում ու վթարային-փրկարարական աշխատանքներ, սահմանված կարգով մշակում է բնակավայրերի և օբյեկտների հրդեհականխարգելիչ միջոցառումներ:

Հրդեհային պահպանության մարտական և ծառայողական կանոնագրքերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում լիազորված մարմինն իրականացնում է պետական հակահրդեհային ծառայության ընդհանուր ղեկավարում:

Լիազորված մարմնի պետական հակահրդեհային ծառայության և տեսչական մարմնի աշխատակիցները կրում են տարբերանշաններ և համազգեստ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Տեսչական մարմինն իրականացնում է պետական վերահսկողություն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանման նկատմամբ, օրենքով սահմանված կարգով կատարում է ստուգումներ, կիրառում է վարչական պատասխանատվության միջոցներ: Տեսչական մարմնի տված կարգադրագրերի, եզրակացությունների և կայացվող որոշումների ձևերը սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը: Հրդեհների և տեխնիկական անվտանգության վերաբերյալ գործերով դեպքի վայրի պահպանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

(13-րդ հոդվածը լրաց., փոփ. 20.05.05 ՀՕ-108-Ն, լրաց. 01.03.18 ՀՕ-135-Ն, փոփ., խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 14. Հրդեհային պահպանության համակարգի ֆինանսավորումը և նյութատեխնիկական ապահովումը

Բնակավայրերն սպասարկող պետական հակահրդեհային ծառայության ստորաբաժանումների անձնակազմի դրամական բավարարումը, հրդեհային տեխնիկայի, սարքավորումների, վառելիքի, հրդեհաշիջման միջոցների, մարտական հագուստի, հանդերձանքի ձեռքբերման, շահագործման, անձնակազմի ուսուցման, ինչպես նաև այլ ծախսեր իրականացվում են պետական բյուջեից:

Կազմակերպությունները պահպանող գերատեսչական հրդեհային պահպանության ստորաբաժանումները պահպանելու, դրանք բնակելի տարածքներով ապահովելու և մյուս ծախսերն իրականացնում են համապատասխան կազմակերպությունները:

Հոդված 15. Հրդեհային պահպանության գույքը

Հրդեհային պահպանության գույքը հրդեհային պահպանության համակարգի վրա դրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գույքն է, որի ցանկը սահմանում է պետական հակահրդեհային ծառայությունը:

Հրդեհային պահպանության մարմինների գույքը, անկախ նրա պատկանելությունից, կարող է օգտագործվել միայն ըստ տվյալ գույքի նպատակային նշանակության:

Նշված գույքի ոչ նպատակային օգտագործումն արտակարգ իրավիճակներում կարող են թույլատրել հրդեհային հսկողության մարմինները:

Հոդված 16. Պետական հակահրդեհային ծառայության ռազմականացված ստորաբաժանումները

Բնակավայրերը պահպանող պետական հակահրդեհային ծառայության ռազմականացված ստորաբաժանումներն ստեղծում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ պետական կառավարման համապատասխան տարածքային մարմինների ներկայացմամբ:

Կազմակերպությունները պահպանող պետական հակահրդեհային ծառայության ռազմականացված ստորաբաժանումներն ստեղծում է լիազորված մարմինը՝ այդ կազմակերպությունների ներկայացմամբ: Նշված ստորաբաժանումների անձնակազմի թվաքանակը որոշվում է պայմանագրային կարգով՝ ելնելով լիազորված մարմնի հաստատած նորմատիվներից:

Հոդված 17. Պետական հակահրդեհային ծառայության ոչ ռազմականացված ստորաբաժանումները

Բնակավայրերը պահպանող պետական հակահրդեհային ծառայության ոչ ռազմականացված ստորաբաժանումներն ստեղծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Կազմակերպությունները պահպանող հակահրդեհային ծառայության ոչ ռազմականացված ստորաբաժանումներն

ստեղծվում են պայմանագրային հիմունքներով՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 18. Գերատեսչական հակահրդեհային ծառայությունը

Պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները հրդեհային անվտանգության ապահովման նպատակով կարող են ստեղծել գերատեսչական հակահրդեհային ծառայության ստորաբաժանումներ:

Գերատեսչական հակահրդեհային ծառայության ստորաբաժանումները, որոնք ունեն արտագնա հրդեհային տեխնիկա, հաշվառվում են լիազորված մարմնի պետական հակահրդեհային ծառայությունում և օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավվում են հրդեհաշիջման ու վթարային-փրկարարական աշխատանքներում:

Հրդեհաշիջման կազմակերպման և անձնակազմի պատրաստականության հարցերում գերատեսչական հակահրդեհային ծառայության ստորաբաժանումները ղեկավարվում են պետական հակահրդեհային ծառայության գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերով:

Հոդված 19. Հրդեհային պահպանության հասարակական կազմավորումները

Հրդեհային պահպանության հասարակական կազմավորումները կարող են ստեղծվել օրենսդրությամբ սահմանված կարգով և աջակցել պետական կառավարման մարմիններին, կազմակերպություններին, քաղաքացիներին բնակավայրերում, ինչպես նաև օբյեկտներում՝ հրդեհների կանխման և հրդեհաշիջման գործում:

Հոդված 20. Պետական հրդեհային հսկողությունը

Պետական հրդեհային հսկողությունն իրականացնում են տեսչական մարմնի պաշտոնատար անձինք՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման և դրանց խախտումների կանխման համար:

(պարբերությունն ուժը կորցրել է 09.07.20 ՀՕ-370-Ն)

Տեսչական մարմնի պաշտոնատար անձինք պետական հրդեհային հսկողություն իրականացնելիս իրավունք ունեն՝

ա) կազմակերպել հրդեհային անվտանգության գծով կատարման համար պարտադիր, ինչպես նաև հրդեհատեխնիկական արտադրանքի մշակման, թողարկման և շահագործման կարգը սահմանող նորմատիվ փաստաթղթերի մշակումը՝ ինքնուրույն կամ պետական կառավարման հանրապետական մարմինների հետ համատեղ.

բ) իրականացնել պետական հրդեհային հսկողություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ.

գ) առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հրդեհային անվտանգության միջոցառումների անցկացման վերաբերյալ.

դ) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման և խախտումների կանխարգելման ուղղությամբ հսկողություն իրականացնելու նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացնել տարածքների, շենքերի, կառույցների, շինությունների և այլ օբյեկտների հետազոտություններ ու ստուգումներ.

ե) մասնակցել շինարարության համար հրապարակների (ճանապարհների) ընտրության, ինչպես նաև ավարտված շինարարության (վերակառուցված) օբյեկտների շահագործումն ընդունող հանձնաժողովների աշխատանքներին.

զ) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների բացակայության դեպքում հրդեհային անվտանգության պահանջների կատարման ուղղությամբ շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման համար մշակել և առաջարկել լրացուցիչ հակահրդեհային միջոցառումներ.

է) հրդեհային անվտանգության պահանջները կատարելու համար կազմակերպությունների ղեկավարներին, պաշտոնատար անձանց և քաղաքացիներին տալ կատարման համար պարտադիր կարգադրագրեր՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտումները վերացնելու, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հրդեհային անվտանգությունն ապահովելու, ապրանքներն արտադրությունից հանելու, դրանց թողարկումն արգելելու և իրացումը դադարեցնելու մասին.

ը) ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնել կազմակերպությունների, արտադրական տեղամասերի, առանձին ագրեգատների աշխատանքը, շենքերի, շինությունների շինարարության, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, ինչպես նաև շենքերի և շինությունների շահագործումը հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների այն խախտումների դեպքում, որոնք անմիջականորեն և ուղղակի սպառնալիք են ստեղծում հրդեհների առաջացման և (կամ) մարդկանց անվտանգության համար.

թ) գործող օրենքին համապատասխան վարչական պատասխանատվության ենթարկել քաղաքացիներին և պաշտոնատար անձանց՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտման համար:

Անտառներում, ստորգետնյա հանքերում, երկաթուղային և օդային տրանսպորտում հրդեհային անվտանգության

նորմատիվ փաստաթղթերի պահպանման նկատմամբ պետական հսկողությունն իրականացնում է համապատասխան նախարարությունը, վարչությունը կամ գերատեսչությունը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության նախարարությունների օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացնում են համապատասխանաբար այդ նախարարությունները՝ տեսչական մարմնի հետ համաձայնեցված կարգով:

Դիվանագիտական և հյուպատոսական մարմինների օբյեկտներում պետական հրդեհային հսկողությունն իրականացվում է միայն նշված հիմնարկների պաշտոնական ներկայացուցիչների խնդրանքով և գրավոր թույլտվությամբ:

Տեսչական մարմնի ղեկավարի ցուցումները և կարգադրությունները պարտադիր են տեսչական մարմնի ստորաբաժանումների պաշտոնատար անձանց համար՝ նրանց կողմից պետական հրդեհային հսկողություն իրականացվելու ժամանակ: Այդ դեպքում այլ պաշտոնատար անձանց միջամտությունը նրանց գործունեությանը չի թույլատրվում:

(20-րդ հոդվածը փոփ. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ., խմբ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 21. Հրդեհաշիջումը

Հրդեհաշիջումն իրենից ներկայացնում է մարտական գործողություններ, որոնք ուղղված են մարդկանց, գույքը փրկելուն, ինչպես նաև հրդեհները վերացնելուն:

Հրդեհաշիջման ժամանակ հակահրդեհային ծառայության աշխատակիցները կարող են անցկացնել անհրաժեշտ գործողություններ՝ մարդկանց անվտանգությունն ապահովելու, գույքը փրկելու ուղղությամբ, այդ թվում՝

ա) օրվա ցանկացած ժամին մուտք գործել կազմակերպություններ, ինչպես նաև քաղաքացիների բնակելի տներ ու այլ շինություններ, որտեղ տարածվել կամ կարող է տարածվել հրդեհը, անհրաժեշտության դեպքում՝ բացել փակ դռները և պատուհանները, ինչպես նաև պատնեշող կառույցները՝ մարդկանց փրկելու և հրդեհաշիջման նպատակով.

բ) ժամանակավորապես սահմանափակել կամ արգելել տրանսպորտի երթևեկությունը և հետիոտնի անցուդարձը փողոցներով ու ճանապարհներով, ինչպես նաև քաղաքացիների մուտքը տեղանքի առանձին հատվածներ կամ օբյեկտներ, պարտավորեցնել քաղաքացիներին լքելու հրդեհաշիջման և վթարային-փրկարարական աշխատանքների տեղամասը.

գ) հրդեհաշիջման և վթարային-փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ, ծառայողական նպատակներով, սահմանված կարգով անարգել օգտվել կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կապի, տրանսպորտի միջոցներից (բացառությամբ հատուկ նշանակության, դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների), ջրի աղբյուրներից՝ վնասների փոխհատուցման պայմանով.

դ) հրդեհի վայր մեկնելիս օգտվել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով երթևեկության փաստաթղթեր արտահերթ ձեռք բերելու և հյուրանոցում ծառայողական վկայականով տեղավորվելու իրավունքից:

Հրդեհաշիջման ղեկավարին ենթարկվում են հրդեհի վայրում գտնվող հրդեհային պահպանության բոլոր ուժերն ու միջոցները: Պաշտոնատար անձինք և քաղաքացիները չեն կարող միջամտել նրա գործողություններին կամ չկատարել հրդեհաշիջմանը վերաբերող նրա կարգադրությունները:

Հրդեհաշիջման ղեկավարի՝ իր իրավասության շրջանակներում ներկայացրած պահանջները պարտադիր են կատարման բոլոր այն պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար, որոնց դրանք ուղղված են: Ղեկավարն իրավասու է անել կատարման համար պարտադիր կարգադրություններ հրդեհի գոտում գտնվող օբյեկտների, առանձին արտադրությունների, տեղամասերի, ագրեգատների աշխատանքի դադարեցման և սարքավորումների անջատման վերաբերյալ, հրդեհաշիջումը կազմակերպելու նպատակով հրդեհված օբյեկտի պաշտոնատար անձանցից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ վտանգավոր նյութերի առկայության և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

Հրդեհաշիջման կազմակերպման և կատարման հիմնական դրույթները սահմանվում են հրդեհային պահպանության մարտական կանոնագրքով:

Հակահրդեհային ծառայության աշխատակիցները, օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն են կրում հրդեհաշիջման ժամանակ թույլ տրված սխալների, ինչպես նաև իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հոդված 22. Հակահրդեհային ծառայության և տեսչական մարմնի պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկումը

(վերնագիրը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հակահրդեհային ծառայության և տեսչական մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները հրդեհային անվտանգության բնագավառում կարող են բողոքարկվել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բողոքարկումը չի կասեցնում դրանց կատարումը:

(22-րդ հոդվածը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 23. Պետական հակահրդեհային ծառայության աշխատակիցների և աշխատողների սոցիալական ապահովությունը

(վերնագիրը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Պետական հակահրդեհային ծառայության ռազմականացված ստորաբաժանումների աշխատակիցների սոցիալական ապահովության հարցերը կարգավորվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

(23-րդ հոդվածը լրաց. 20.05.05 ՀՕ-108-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Գ Լ ՈՒ Խ 3.

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 24. Հրդեհային անվտանգության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

Հրդեհային անվտանգության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

ա) հրդեհային անվտանգության ուղղությամբ պետական քաղաքականության իրականացումը.

բ) հանրապետական նպատակային ծրագրերի հաստատումը և ֆինանսավորումը.

գ) հրդեհային անվտանգության, այդ թվում՝ հրդեհային պահպանության ապահովման ծախսերի մասով պետական բյուջեի պլանավորումը և կատարումը.

դ) պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող հրդեհային պահպանության կառավարման մարմինների, ստորաբաժանումների, հրդեհատեխնիկական գիտահետազոտական հիմնարկների և հրդեհատեխնիկական ուսումնական հաստատությունների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը.

ե) հրդեհային անվտանգության ապահովման սոցիալական և տնտեսական խթանման իրականացման, այդ թվում՝ հրդեհատեխնիկական արտադրանքի արտադրության և գնման, ինչպես նաև հրդեհների դեմ պայքարում բնակչության մասնակցության ընդհանուր սկզբունքների սահմանումը.

զ) պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող հրդեհային պահպանության թվաքանակի սահմանումը.

է) այն կազմակերպությունների ցանկի սահմանումը (այդ թվում՝ պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող), որոնցում, համաձայն նորմերի, ստեղծվում է հրդեհային պահպանություն.

ը) պետական կարիքների համար հրդեհատեխնիկական արտադրանքի անվանացուցակի, թողարկման և մատակարարման ծավալի սահմանումը.

թ) հրդեհային պահպանության տարբերանշանների և համազգեստի սահմանումը:

Հոդված 25. Հրդեհային անվտանգության բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորությունները

Հրդեհային անվտանգության բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորություններն են՝

ա) հրդեհային անվտանգության ապահովման բնագավառի նորմատիվ իրավական կարգավորումը, իրավական ակտերի մշակումը և պետական միջոցառումների իրականացումը.

բ) հրդեհային պահպանության ծառայությունների ստեղծումը և նրանց գործունեության կազմակերպումը.

գ) նպատակային ծրագրերի մշակումը և կատարման կազմակերպումը.

դ) հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ պետական հրդեհային հսկողության և այլ հսկողական գործառույթների իրականացումը.

ե) իրենց իրավասության սահմաններում հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի և հրդեհային անվտանգության վերաբերյալ այլ ակտերի մշակման կազմակերպումը և հաստատումը.

զ) հրդեհային անվտանգության ապահովման միջոցառումների մշակումը և իրականացումը.

է) գիտության և տեխնիկայի զարգացման կազմակերպումը, գիտական հետազոտությունների և մշակումների համակարգումը.

ը) տեղեկատվության, ինչպես նաև հրդեհների և դրանց հետևանքների վիճակագրական հաշվառման ապահովումը.

թ) հակահրդեհային քարոզչությունը և քաղաքացիների՝ հրդեհային անվտանգության միջոցառումների ուսուցումը.

ժ) հրդեհային պահպանության համար կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման կազմակերպումը.

ժա) հրդեհատեխնիկական արտադրանքի արտադրությունը.

ժբ) հրդեհաշիջումը և դրա հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքների կատարումը.

ժգ) հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Հոդված 26. Հրդեհային անվտանգության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Հրդեհային անվտանգության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

ա) հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

բ) հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցելն ու օգնելը:

2. Հրդեհային անվտանգության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր լիազորություններն են՝

ա) հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում.

բ) հրդեհային պահպանության հասարակական միավորումների գործունեությանն աջակցելը.

գ) հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը.

դ) հակահրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը:

Գ Լ Ո Ւ Խ 4.

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

Հոդված 27. Բնակավայրերի և օբյեկտների հրդեհային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները

Բնակավայրերը և օբյեկտները պետք է ապահովված լինեն հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին և շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի:

Շենքերի, շինությունների, կազմակերպությունների ծավալահատակագծային ու կառուցվածքային լուծումները, ինչպես նաև դրանց միջև անջրպետները պետք է ապահովեն մարդկանց անվտանգությունը և հրդեհների մարումը:

Բնակավայրերի բնակելի տարածքի սահմաններում պոտենցիալ վտանգավոր (հրդեհների աղետային զարգացման առումով) պահեստների և շինությունների, ինչպես նաև այրվող գազերով և հեղուկներով տարանցիկ խողովակաշարերի տեղաբաշխումն իրականացվում է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նշված օբյեկտների համար շինարարական հրապարակներն ընտրում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ելնելով հրդեհապայթունավտանգավորության փորձաքննության արդյունքներից:

Հոդված 28. Նորմատիվ փաստաթղթերի հրդեհային անվտանգության պահանջների կատարումն օբյեկտների նախագծման, շինարարության և շահագործման հանձնման ընթացքում

Օբյեկտների, այդ թվում՝ շենքերի և շինությունների նախագծման և շինարարության ընթացքում պետք է կատարվեն նորմատիվ փաստաթղթերով նախատեսված հրդեհային անվտանգության պահանջները: Շինարարությամբ, վերակառուցմամբ և տեխնիկական վերազինմամբ ավարտված օբյեկտները, այդ թվում՝ շենքերը և շինությունները, չեն կարող շահագործման հանձնվել, եթե այնտեղ չեն կատարվել նախագծով նախատեսված հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջները:

Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների, դրանց մասերի կամ համալիրների կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման (ներառյալ՝ քանդման), արդիականացման նախագծերը համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ:

Հոդված 29. Հրդեհային անվտանգության բնագավառում տեղեկատվության ապահովումը

Հրդեհային անվտանգության բնագավառում տեղեկատվության ապահովումն իրականացվում է հրդեհային անվտանգության ապահովման համակարգում այնպիսի հատուկ տեղեկատվության համակարգեր և տվյալների բանկեր (այսուհետ՝ տեղեկատվության համակարգ) ստեղծելու և օգտագործելու միջոցով, որոնք անհրաժեշտ են առաջադրված խնդիրների կատարման համար:

Հրդեհային անվտանգության մասին տեղեկությունները տեղեկատվության համակարգերում մտցնելու հիմքը և կարգը, ինչպես նաև դրանց հետ պաշտոնատար անձանց և քաղաքացիների ծանոթացման պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության լիազորված մարմինները և մյուս պետական մարմինները պարտավոր են անմիջապես և անհատույց կարգով տեղեկացնել պետական հակահրդեհային ծառայությանը և տեսչական մարմնին հրդեհային անվտանգության համար անբարենպաստ դեպքերի և կանխազուշակումների մասին:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է տեղեկացնեն բնակչությանը հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ իրենց ընդունած որոշումների մասին և աջակցեն հրդեհատեխնիկական գիտելիքների տարածմանը:

(29-րդ հոդվածը լրաց. 09.07.20 ՀՕ-370-Ն)

Գ Լ Ո Ւ Խ 5.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 30. Կազմակերպությունների իրավունքները և պարտականությունները հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում

1. Կազմակերպություններն իրավունք ունեն՝

ա) սահմանված կարգով ստեղծել, վերակազմակերպել և լուծարել հրդեհային պահպանության այն ստորաբաժանումները, որոնք պահվում են սեփական միջոցների հաշվին, այդ թվում՝ պետական հակահրդեհային ծառայության հետ պայմանագրի համաձայն.

բ) առաջարկություններ ներկայացնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ.

գ) աշխատանքներ տանել ծագած հրդեհի հանգամանքներն ու պատճառները պարզելու ուղղությամբ.

դ) տեղեկություններ ստանալ հրդեհային անվտանգության հարցերով, այդ թվում՝ հրդեհային պահպանության կառավարման մարմիններից և ստորաբաժանումներից:

2. Կազմակերպությունները պարտավոր են՝

ա) կատարել հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև կատարել հրդեհային պահպանության մարմինների պաշտոնատար անձանց կարգադրությունները, որոշումները և այլ օրինական պահանջները.

բ) մշակել և իրագործել միջոցառումներ՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ.

գ) կոլեկտիվ պայմանագրերում (համաձայնագրերում) ներառել հրդեհային անվտանգության հարցերը.

դ) սարքին վիճակում պահել հակահրդեհային համակարգերը և միջոցները, այդ թվում՝ հրդեհաշիջման առաջնային միջոցները, արգելել դրանց ոչ նպատակային օգտագործումը.

ե) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների համաձայն, սահմանված կարգով, ստեղծել հրդեհային պահպանության ղեկավարման մարմիններ և ստորաբաժանումներ, այդ թվում՝ պետական հակահրդեհային ծառայության հետ կնքված պայմանագրերով.

զ) աջակցել հրդեհային պահպանությանը՝ հրդեհաշիջման, հրդեհների ծագման պատճառների և պայմանների բացահայտման, ինչպես նաև հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերը խախտած և հրդեհների առաջացման մեջ մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ տարվող աշխատանքներում.

է) կազմակերպության տարածքում հրդեհաշիջման ժամանակ, սահմանված կարգով, հրդեհաշիջմանը մասնակցած անձանց տրամադրել անհրաժեշտ ուժեր և միջոցներ, վառելիքաքսուքային նյութեր, ինչպես նաև սննդամթերք և հանգստյան վայր՝ փոխհատուցման պայմանով.

ը) իրենց ծառայողական պարտականությունները կատարող հրդեհային պահպանության պաշտոնատար անձանց ապահովել կազմակերպության տարածք, շենքեր, շինություններ և այլ օբյեկտներ մուտք գործելու հնարավորությամբ.

թ) տեսչական մարմնի պաշտոնատար անձանց պահանջով ներկայացնել տեղեկություններ և փաստաթղթեր կազմակերպության հրդեհային անվտանգության վիճակի, այդ թվում՝ իրենց արտադրանքի հրդեհային վտանգավորության, ինչպես նաև նախկինում իրենց տարածքում տեղի ունեցած հրդեհների և դրանց հետևանքների մասին.

ժ) հրդեհային պահպանության մարմիններին անհապաղ տեղյակ պահել ծագած հրդեհների, հակահրդեհային համակարգերում կամ միջոցներում տեղ գտած անսարքությունների, ճանապարհների և անցուղիների վիճակի

փոփոխման մասին:

(30-րդ հոդվածը փոփ. 20.05.05 ՀՕ-108-Ն, 09.07.20 ՀՕ-370-Ն)

Հոդված 31. Քաղաքացիների իրավունքները և պարտականությունները հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն՝

ա) պաշտպանել իրենց կյանքը, առողջությունը և գույքը հրդեհներից.

բ) օրենքով սահմանված կարգով ստանալ հրդեհի հետևանքով առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցում կամ ապահովագրական հատուցում.

գ) պետական հրդեհային հսկողության մարմիններից ստանալ անհրաժեշտ բացատրություններ և խորհրդատվություն՝ հրդեհային անվտանգության վերաբերյալ.

դ) իրենց մասնակցությունը ցուցաբերել հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում, այդ թվում՝ հրդեհային պահպանության հասարակական միավորումների միջոցով.

ե) աջակցել հրդեհի առաջացման պատճառների բացահայտմանը:

2. Հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում քաղաքացիները պարտավոր են՝

ա) կատարել հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջները.

բ) հրդեհը հայտնաբերելու դեպքում հայտնել այդ մասին հրդեհային պահպանության մարմիններին և, առանց իրենց համար զգալի վտանգի ու առանց այլ կարևոր պարտականությունների խանգարման, հնարավոր միջոցներ ձեռնարկել մարդկանց, գույքը փրկելու և հրդեհը մարելու համար.

գ) հնարավորություն տալ պետական հրդեհային հսկողության մարմինների պաշտոնատար անձանց, օրենքով սահմանված կարգով, հետազոտելու բնակելի և օժանդակ շինությունները:

Գ Լ Ո Ւ Խ 6.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 32. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

Սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 33. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ **Ռ. Քոչարյան**

Երևան
15 մայիսի 2001 թ.
ՀՕ-176